ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2022 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 984-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Պիտանիության ժամկետում չիրացված՝ դրոշմավորված ապրանքների դուրսգրման կարգը սահմանելու մասին» N 984-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանից «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը,

2) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

3) որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի _____ _____-ի
N_____-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2013 թվականի դեկտեմբերի 28-ի
N 984-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉԻՐԱՑՎԱԾ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.2-րդ հոդվածում նշված՝ դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգին համապատասխան դուրս են գրվում դրոշմապիտակներով դրոշմավորված այն ապրանքները, որոնք այդ ապրանքների համար սահմանված պիտանիության (պահպանման) ժամկետում չեն օտարվել, այդ թվում՝ վերադարձվել են կամ համապատասխան փաստաթղթերի հիման վրա համարվել են օտարման համար ոչ պիտանի (այսուհետ՝ օտարման համար ոչ պիտանի):

3. Օտարման համար ոչ պիտանի ապրանքները սույն կարգին համապատասխան դուրս գրելու իրավունք ունի միայն Օրենքի 9.1-ին հոդվածով սահմանված՝ ապրանքի դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրողը (այսուհետ՝ դրոշմավորող):

4. Օտարման համար ոչ պիտանի ապրանքները դուրս են գրվում կազմակերպության ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ հրամանով (կարգադրությամբ) ստեղծված՝ առնվազն երեք անդամից բաղկացած հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) միջոցով:

5. Դրոշմավորող կազմակերպության մոտ օտարման համար ոչ պիտանի ապրանքների (ապրանքային մնացորդների) առկայությունը հիմնավորվում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերով, իսկ անհատ ձեռնարկատերերի մոտ՝ հաշվառման տվյալներով: Մատակարարման պայմանագրով գնորդներին առաքված

կամ կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրով՝ օտարում կազմակերպող անձանց տրամադրված օտարման համար ոչ պիտանի ապրանքների հետընդունումը հիմնավորվում է ընդունման-հանձնման ակտով, իսկ հարկային հաշիվ (հաշիվ վավերագիր) դուրս գրված լինելու դեպքում՝ նաև ճշգրտող հարկային հաշվի (հաշիվ վավերագրի) առկայությամբ: Հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի հիման վրա օտարում կազմակերպող անձանց տրամադրված՝ օտարման համար ոչ պիտանի ապրանքների հետընդունումը հիմնավորվում է ընդունման-հանձնման ակտով:

6. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման գործընթացը ներառում է՝

1) դրոշմավորողի մոտ դուրսգրման ենթակա օտարման համար ոչ պիտանի ապրանքների առկայությունը կամ օտարման համար ոչ պիտանի ապրանքների հետընդունումը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությունը.

2) դուրսգրման ենթակա օտարման համար ոչ պիտանի ապրանքների քանակների արձանագրումը (հաշվարկը).

3) օտարման համար ոչ պիտանի ապրանքների քանակների արձանագրման արդյունքների և սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերով ցույց տրված քանակների համապատասխանության (ըստ ապրանքների անվանումների (մակնիշների), տարողությունների (ծավալների, քաշերի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ այլ չափման միավորների) ստուգումը.

4) օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման վերաբերյալ համապատասխան ակտի կազմումը.

5) դուրս գրվող օտարման համար ոչ պիտանի ապրանքների ապրանքային տեսքի փչացումը և ապատարայավորումը (ապափաթեթավորումը).

6) սահմանված սանիտարական և բնապահպանական նորմերին համապատասխան օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման ընթացքում առաջացող թափոնների վնասազերծումը կամ վերամշակումը.

7) օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման արդյունքների վերաբերյալ կազմակերպություններում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան հաշվապահական հաշվառման մեջ (անհատ

ձեռնարկատերերի դեպքում՝ հարկային հաշվառման մեջ) ձևակերպումների կատարումը:

7. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման ենթակա քանակների արձանագրումն իրականացվում է ըստ ապրանքատեսակների և տարողությունների (ծավալների, քաշերի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ այլ չափման միավորների): Դուրսգրման ենթակա են օտարման համար ոչ պիտանի ապրանքների փաստացի քանակները, սակայն ոչ ավելի փաստաթղթերով հիմնավորված համապատասխան քանակներից:

8. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման գործընթացն սկսելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ դրոշմավորողը հարկային մարմին թղթային եղանակով ներկայացնում է ապրանքների դուրսգրում իրականացնելու վերաբերյալ գրություն՝ նշելով այդ ապրանքների գտնվելու վայրը (դուրսգրման վայրը) և դուրսգրման գործընթացն սկսելու ժամը:

9. Հարկային մարմնի ղեկավարի հրամանով նշանակվում է հարկային մարմնի աշխատակից, ով իրավունք ունի մասնակցելու դուրսգրման գործընթացի բոլոր փուլերին՝ բացի դուրսգրման արդյունքների ձևակերպումից: Հարկային մարմնի ղեկավարի հրամանի օրինակը ապրանքների դուրսգրման գործընթացը սկսելիս ներկայացվում է կազմակերպության ղեկավարին (անհատ ձեռնարկատիրոջը): Հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ սույն կետով սահմանված հրամանի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային մարմնի ղեկավարի տեղակալին:

10. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման գործընթացին հարկային մարմնի աշխատակցի չներկայանալը հիմք չէ դուրսգրման գործընթացը հետաձգելու կամ չիրականացնելու համար:

11. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման գործընթացին մասնակցող հարկային մարմնի աշխատակիցն իրավունք ունի ստուգելու դուրս գրվող ապրանքների վրա պիտանիության (պահպանման) ժամկետը (առկայության դեպքում) և դրա ավարտված լինելու փաստը, ապրանքները օտարման համար ոչ պիտանի համարվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի առկայությունը, դուրս գրվող ապրանքների համապատասխան տեսակի և տարողությամբ (ծավալով, քաշով կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ այլ չափման միավորով) դրոշմապիտակներով

դրոշմավորման փաստը, դուրսգրման գործընթացը՝ սույն կարգին համապատասխան իրականացված լինելը:

12. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրումը ձևակերպվում է ակտով, որում նշվում են այդ ապրանքների քանակները՝ ըստ անվանումների (մակնիշների), տարողությունների (ծավալների, քաշերի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ այլ չափման միավորների), պիտանիության (պահպանման) ժամկետը (առկայության դեպքում), դուրս գրվող ապրանքների ապրանքային տեսքի փչացման և ապատարայավորման (ապափաթեթավորման) ու դուրսգրման ակտը կազմելուց հետո դրոշմավորված ապրանքների ոչնչացման արդյունքում առաջացած թափոնների վնասազերծման, վերամշակման կամ որպես երկրորդային հումք օգտագործելու եղանակները:

13. Դուրս գրվող օտարման համար ոչ պիտանի ապրանքների ապրանքային տեսքի փչացումից և ապատարայավորումից (ապափաթեթավորումից) հետո դուրսգրման ակտն ստորագրվում է հանձնաժողովի անդամների և կազմակերպության ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից, իսկ դուրսգրման գործընթացին հարկային մարմնի աշխատակցի մասնակցության դեպքում՝ նաև վերջինիս կողմից: Հարկային մարմնի աշխատակիցն ակտում իրավունք ունի կատարելու գրառումներ դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դրոշմավորման կանոնների և սույն կարգի դրույթների պահպանման վերաբերյալ: Հարկային մարմնի աշխատակցի ստորագրությամբ ակտի մեկ օրինակը հարկային մարմնի աշխատակիցը հանձնում է հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին՝ հարկ վճարողի անձնական գործում պահելու համար:

14. Օտարման համար ոչ պիտանի ապրանքների դուրսգրման վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ ակտի կազմման ամսաթիվը, արտացոլվում են դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) հարկ վճարողին վերադարձման դիմումի մեջ, ինչպես նաև նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) մեջ: Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 9.3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում, ինչպես նաև դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների

արտադրության դադարեցման դեպքում՝ մինչև դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

15. Սույն կարգին համապատասխան դուրս գրված ապրանքների մասով հարկային պարտավորություններ չեն առաջանում: Օտարման համար ոչ պիտանի, ինչպես նաև Արցախի Հանրապետությունից (բացի Հայաստանի Հանրապետություն) արտահանված ապրանքների դրոշմավորման համար դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարները ենթակա չեն նվազեցման հարկ վճարողի հարկային պարտավորություններից: Շահութահարկով կամ եկամտային հարկով հարկման նպատակով օտարման համար ոչ պիտանի և սույն կարգին համապատասխան դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարները նվազեցվում են համախառն եկամտից՝ համապատասխանաբար «Շահութահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» օրենքներով սահմանված կարգով:»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**